«ՀՀ Գեղարքունիքի մարզի Այգուտ գյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը հայտարարում է մրցույթ « Հայոց լեզու և գրականություն » (18 դասաժամով) ,«ֆիզիկա» (5 դասաժամով) և «Մաթեմատիկա» (21 դասաժամով)
առարկաների ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:
Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՄՆ մշակած հարցաշարերի:
Հարցազրույցի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձև 1),
- 1 լուսանկար 3X4 չափի,
- բարձրագույն կրթությանը հաստատող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասի համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը՝(առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն(Ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարրակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:
Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:
Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից մինչև 2021թ. հոկտեմբերի 7-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10.00-ից 15.00-ը, բացի շաբաթ, կիրակի, և ոչ աշխատանքային օրերից:
Մրցույթները տեղի կունենան 2021թ. հոկտեմբերի 14-ին, ժամը 11.00-ից, Այգուտ գյուղի միջնակարգ դպրոցում, հասցեն՝ փող. 3 ,շենք 52/1 ՀՀ Գեղարքունիքի մարզ, գյուղ Այգուտ :
Տեղեկությունների համար զանգահարել (093)01-81-58 հեռախոսահամարով: